# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը Կ. Պոլսո Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Գազանճյանի ներկայացմամբ պոլսահայ ազգայիններ Արտաշես Տյումճյանի և Ավետիս Մոսիկյանի՝ տեղի հայ համայնքին և եկեղեցուն մատուցած ծառայությունները բարձրորեն գնահատել է նրանց ուղղված 1997 թ. հուլիս 12 թվակիր Հայրապետական օրհնության գրերով:

Նույն կերպ Նորին Սրբությունը Սանկտ Պետերբուրգի Հոգևոր հովիվ Տ. Եզրաս աբղ. Ներսիսյանի ներկայացմամբ տեղի հայ համայնքի և Ս. Կատարինե եկեղեցու հանդեպ քաղաքի ազգայիններ Կամո Ակոպովի, Նորիկ Ավագյանի, Ռոբերտ Սերմիսզյանի, Միքայել Սարդարյանի, Լևոն Թումասյանի, Արմեն Ղազարյանի, Մերուժան Առաքելյանի, Արթուր Էֆերջյանի և Վազգեն Կարապետյանի նվիրվածությունը բարձրորեն գնահատել է նրանց ուղղված 1997 թ. հուլիս 18 թվակիր Հայրապետական օրհնության գրերով: